



Մ ՈՒՐՐԵ Յ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԱՄՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



ՎԵՐԱՓՈՒՈՒՄԷՆ ԵՏԵ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

30 ՕԳՈՍՏՈՍ 2020

Կիրակնօրեայ Ընթերցումներ	էջ 1
Ծանուցումներ	էջ 2

ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ

(9.8-19)

Տէրը դատավճիռ արձակեց Յակոբի որդիներուն, այսինքն Իսրայէլի թագա-ւորութեան դէմ. այդ մասին պիտի իմանայ ամբողջ ժողովուրդը, այսինքն Եփրեմը եւ Սամարիայի բնակիչները, որոնք հպարտութեամբ եւ ամբարտաւան սիրտով կ'ըսեն. “Աղիւսէ տուները փլան, ի՛նչ փոյթ, մենք նորերը կը կանգնենք տաշուած քարերով. մայրիներ ու եղբւրիներ կը կտրենք եւ աշտարակ կը շինենք մեզի համար”: Ուստի Տէրը թշնամիներ պիտի յարուցանէ անոր դէմ, պիտի գրգռէ անոր թշնամիները, արեւելքէն՝ ասորիները եւ արեւմուտքէն՝ փղշտացիները, որոնք բաց բերանով պիտի կլլեն Իսրայէլը: Այսքանով Տիրոջ բարկութիւնը չիջաւ. անոր ձեռքը դեռ բարձրացած կը մնայ՝ պատժելու համար: Որովհետեւ հակառակ իր ստացած հարուածին՝ ժողովուրդը չզղջաց, չզարձաւ ու չփնտուեց Երկնային Զօրքերու Տէրը: Ուստի Տէրը մէկ օրուան մէջ պիտի կտրէ Իսրայէլի գլուխն ու պոչը, մեծն ու պզտիկը: Գլուխը՝ ձերերն ու աչքառու մարդիկն են, իսկ պոչը՝ ստուերն սորվեցնող մարգարէները: Առաջնորդները իրենք մոլորած՝ երանիներով մոլորեցուցին այս ժո-ղովուրդը, որպէսզի կլլեն զայն: Այդ պատճառով ալ Տէրը անոնց երիտասարդներուն պիտի չխնայէ. անոնց որբերուն եւ այրիներուն պիտի չողորմի, որովհետեւ բոլորն ալ անօրէն են եւ չար, անոնց բերանները միայն անիրաւութիւն կ'արտաբերեն: Ուստի տակաւին

Տիրոջ բարկութիւնը չիջաւ. անոր ձեռքը դեռ բարձրացած կը մնայ՝ պատժելու համար: Որովհետեւ, իրենց անօրէնութիւնը պիտի այրէ զիրենք կրակի մը պէս, որ կը սպառէ չորցած սէզերն ու փուշերը եւ կը խանձէ անտառին թանձրախիտ ծառերը, ծուխի սիւներ դէպի երկինք նետելով: Տիրոջ բարկութենէն երկիրը պիտի այրի, ժողովուրդը ինք հրոյ ճարակ պիտի դառնայ եւ իրենք զիրենք փրկելու համար մարդիկ իրենց հարազատներուն իսկ պիտի չխնայեն:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ

(1.1-11)

Ես, Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Քրիստոսի առաքեալը, եւ Տիմոթէոս՝ մեր եղբայրը, կը գրենք ձեզի՝ Կորնթոսի մէջ հաստատուած Աստուծոյ եկեղեցիին եւ ամբողջ Աքայիայի մէջ գտնուող քրիստոնեաներու: Թող Աստուած մեր Հայրը եւ Տէր Յիսուս Քրիստոս շնորհք եւ խաղաղութիւն պարգեւեն ձեզի:

Օրհնեալ ըլլայ Աստուած, մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հայրը, որ հայրաբար կը գթայ եւ որպէս Աստուած կը մխիթարէ ու կը զօրացնէ մեզ մեր բոլոր նեղութիւններուն մէջ, որպէսզի մենք կարենանք Աստուծոյ մեր վայելած օգնութիւնն ու մխիթարութիւնը տալ անոնց՝ որոնք ամէն տեսակի նեղութեանց մէջ են: Որովհետեւ, որքան շատ բաժնեկից ըլլանք Քրիստոսի չարչարանքներուն, այնքան աւելի մեծ պիտի ըլլայ իր օգնութիւնն ու մխիթարութիւնը մեզի: Մենք նեղութեանց կ'ենթարկուինք՝ ձեզի օգնելու եւ Աստուծոյ փրկութիւնը ձեզի բերելու համար. եւ եթէ Աստուած կ'օգնէ մեզի՝ կրկին ձեզի օգնելու համար է, որպէսզի մեր օրինակով սորվիք

Թէ Աստուած ձեզ ալ պիտի գորացնէ՝ որ համբերութեամբ կարենաք տանիլ այն չարչարանքները որ մենք հիմա կը կրենք: Ուստի ձեր վրայ հաստատուն յոյս ունինք, գիտնալով որ քանի մեր չարչարանքներուն մասնակից էք՝ մեր ունեցած մխիթարութեան ալ մասնակից պիտի ըլլաք:

Եղբայրներ, կ'ուզեմ որ գիտնաք թէ ի՞նչ նեղութիւն կրեցինք Ասիայի մէջ: Մեր կարողութենէն ա՛յնքան վեր էր բերը, որ գրեթէ ապրելու յոյսը կորսնցուցինք: Զգացինք որ մահուան վճիռը կախուած է մեր վրայ: Բայց ատիկա եղաւ, որպէսզի սորվինք մենք մեզի չապաւինիլ, այլ Աստուծոյ որ կը յարուցանէ մեռելները: Ա՛ն էր որ այդպիսի ահաւոր մահուրնէ մը փրկեց մեզ, կը փրկէ, եւ վստահ ենք որ մեզի համար ձեր կատարած աղօթքներուն օգնութեամբ յառաջիկային եւս պիտի փրկէ: Եւ ձեր աղօթքները, որոնց շնորհիւ Աստուած իր հովանին անպակաս պիտի ընէ մեր վրայէն, պատճառ պիտի ըլլան որ շատեր գոհութիւն տան Աստուծոյ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ
(4.35-41)

Նոյն օրը երեկոյեան, Յիսուս իր աշակերտներուն ըսաւ. «Եկէք լիճին միւս կողմը անցնինք»: Աշակերտները ձգեցին ժողովուրդը եւ բարձրացան այն նաւակին մէջ ուր Յիսուս կը գտնուէր: Հոն ուրիշ նաւակներ ալ կային:

Յանկարծ գորաւոր հով մը փոթորկեց ծովը: Ալիքները նաւակին զարնուելով՝ ներս կը թափէին, զայն լեցնելու աստիճան, մինչ Յիսուս նաւակին յետսակողմը բարձի մը վրայ կը քնանար: Աշակերտները արթնցուցին զինք եւ ըսին. «Վարդապետ, հոգը չէ՞ որ մենք կը կորսուինք»: Յիսուս ոտքի ելլելով հովուն սաստեց. «Դադրէ՛», եւ ծովուն ըսաւ. «Հանդարտէ՛»: Հովը դադրեցաւ եւ կատարեալ հանդարտութիւն տիրեց: Ապա Յիսուս դարձաւ իր աշակերտներուն. «Ինչո՞ւ այսպէս վախկոտ էք. տակաւի՞ն հաւատք չունիք»: Անոնք չափազանց վախցան եւ իրարու կ'ըսէին. «Ո՞վ է արդեօք այս մարդը, որուն նոյնիսկ հովն ու ծովը կը հնազանդին»:

ԱՅԾԵԼԵԾԷ՛Ք
ԵԿԵՂԵՑԻՅՈՅ
ԴԻԱՍՏԵՏՈՒ ԷՁՈ
ԵՒ
ՁԵՐ ՀԱԽԱՆՈՒԹԻՒՄԸ
յԱՅՏԱԵԾԷՔ (like).

[www.facebook.com/
SourpHagopChurch-
Montreal](http://www.facebook.com/SourpHagopChurch-Montreal)

ԱՅԾԵԼԵԾԷ՛Ք ԱՁԵ
Ս. ՅԱԿՈԲ
ԱՌԱՋԱՆՈՐԴԱՆԱՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՅ
ԿԱՅՔԷՁՈ՝
www.sourphagop.net

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ
ՁԵՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՄԸ
ԱՆՈՐՕՔ ԿԱՏԱՐԵԾԷՔ ԿՊՈՒԵԼՈՎ
ԵԿԵՂԵՑԻՅ ԴԻԱՆԱՏՈՒՄ
514 331 5445 x202 ԹԻՒՄ